ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-23/2024/ՔՈԳՎ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

«15» «05» 2024թ.
ժ. 16:00

Նիստին Մասնակցում են՝

ա. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության ՔՈԳՎ կազմակերպական վարչության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Ա. Մխիթարյան (հանձնաժողովի նախագահ),

բ. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության ՔՈԳՎ օպերատիվ հետախուզական տեղեկատվության և համակարգչային հանցագործությունների դեմ պայքարի վարչության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Ա. Աբրահամյան (գնահատող անդամ),

գ. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության ՔՈԳՎ մարդու և սեփականության դեմ ուղղված հանցագործությունների դեմ պայքարի վարչության սեփականության դեմ ուղղված հանցագործությունների դեմ պայքարի բաժնի պետ, ոստիկանության կապիտան Ա. Մանուկյան (բացող անդամ),

դ. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության ՔՈԳՎ թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի վարչության թմրաբիզնեսի դեմ պայքարի բաժնի ավագ օպեր-լիազոր, ոստիկանության կապիտան Դ. Պետրոսյան (բացող անդամ):

ե. Գնումներ համակարգող՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ Ա. Աբասյանին (գնահատող հանձնաժողովի քարտուղար):

ՉԵՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ՝

ա. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության ՔՈԳՎ հետախուզման, անօրինական միգրացիայի և ահաբեկչության դեմ պայքարի վարչության հետախուզության և էքստրադիցիայի բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Պ. Սարգիսյան (գնահատող անդամ): ՀՀ կառավարության 526–Ն որոշման կարգի 26–րդ կետի 2–րդ ենթակետի համաձայն նիստը համարվում է իրավազոր:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՏՎՅԱԼՆԵՐ ՀԱՅՏԵՐԸ ԿԱԶՄԵԼՈՒ և ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ՝ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.

Մասնակից՝ **«ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ–ի** փաստաթղթերը կազմված չէր հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես՝ բացակայում էին հրավերով պահանջվող չափաբաժին 1-ի և չափաբաժին 2-ի գնային առաջարկին կից միավոր գների ծավալաթերթերը և գնահատող հանձնաժողովի որոշմամբ մասնակցին տրվել էր 1 աշխատանքային օր անհամապատասխանությունը շտկելու համար: **«ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ–ն ժամանակին պատշաճ կերպով կատարել է շտկումը և գնահատող հանձնաժողովը «ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ–ի հայտը գնահատեց բավարար և որոշեց շարունակել ընթացակարգը:**

2.ՄԱՍՆԱԿՑԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԸ. /ՏԵՍ ԿԻՑ/.

3.ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ՝

ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-23/2024/ՔՈԳՎ ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել՝

1-ին և 2-րդ չափաբաժիններով՝ **«ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ»**

Համաձայն “ Գնումների մասին” ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ չի սահմանվում, քանի որ հայտ է ներկայացրել մեկ մասնակից:

“Գնումների մասին” ՀՀ օրենքով սահմանված ժամկետներում **«ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ –ի** հետ կկնքվի **գրավոր և բանավոր թարգմանությունների ծառայությունների** ձեռքբերման գնման պայմանագիր:

4.Գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու դեպքում՝ դրա հիմնավորումը.

ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-23/2024/ՔՈԳՎ ծածկագրով գնման ընթացակարգը համարվում է կայացած:

Ընդունվեց որոշում՝ կողմ 4, դեմ 0 :

ՆԱԽԱԳԱՀ՝

Ա. Մխիթարյան

ՀԱՅՏԸ ԳՆԱՀԱՏՈՂ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Ա. Աբրահամյան

ՀԱՅՏԸ ԲԱՑՈՂ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Ա. Մանուկյան

Դ. Պետրոսյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ա. Աբասյան

Հ/Բ	Ծառայության, ապրանքի, աշխատանքի անվանումը		«ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ		
		Նախահաշվային արժեք	Գինը առանց ԱԱՀ	ԱԱՀ	Առաջարկված գինը
1	բանավոր թարգմանությունների ծառայություններ	489 000	187 500	37 500	225 000
		Կնոքող Պայմանագրի գին			
		10 000 000			
2	գրավոր թարգմանությունների ծառայություններ	Նախահաշվային արժեք	155 00	31 000	186 000
		327 500			
		Կնոքող Պայմանագրի գին			
		15 000 000			

Ընտրված մասնակցին որոշելու համար կիրառված չափանիշ՝ նվազագույն գնային առաջարկ